

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ**

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՆԹԱԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու)  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

Երևան- 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կարապետի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իննա Ռոբերտի Սարգսյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուսաննա Խուրշուդի Բաղդասարյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 12<sup>00</sup>-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ.-ի օգոստոսի 15- ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Անգլերենի բժշկական կողմնորոշման դասընթացներ կազմակերպվում են հիմնականում բժշկական քոլեջներում և բուհերում: Վերջին շրջանում, քսանմեկերորդ դարի սկզբում ՀՀ-ի պետական բուհերում անգլերենի ուսուցումը դրվեց ավելի գործնական հիմքերի վրա: Մասնավորապես արտասահմանցի ուսանողների հետ աշխատանքի որակի բարձրացման համատեքստում խնդիր դրվեց որոշ առարկաներ, հետագայում բոլոր մասնագիտական առարկաները դասավանդել օտար լեզուներով: Այդ համատեքստում դասախոսների առջև խնդիր դրվեց դասավանդել մասնագիտական առարկաներն օտար լեզուներով: Այդ խնդիրը լուծելու համար, նրանք պետք է կարողանային յուրացնել մասնագիտական ենթալեզուն այն լեզվական մակարդակում, որը բնորոշ է լեզվակիր դասախոսներին: Շատ դասախոսներ կարողացան այդ խնդիրը լուծել՝ հիմնականում անհատական, մասնավոր պարապմունքների, ինչպես նաև տարբեր արտերկրյա դասընթացներում վերապատրաստվելու միջոցով:

Կարելի է առանձնացնել խոսույթին և բժշկական խոսույթին (Акаева 2007, Барсукова 2007, Бейлинсон 2001, Горбачев 2004, Лыткина, Селезнева 2011, Лыткина, Люликова, Селезнева, 2018), բժշկական հասկացությունների վերլուծությանը և ուսուցմանը (Волков, Волкова 2008, Климонова 2007, Попова, Стернин 1999), բժշկական փոխաբերությանը (Зубкова 2008, Шувалов 2006, Зубкова 2008), բժշկական ենթալեզվի ուսուցման շրջանակներում վարժությունների մշակմանը (Лapidус 2006, Стародубцева 2013, Long, Crookes 1992, Willis 2007, Глазырина 2015, Крайнева 2005, Маджаева 2009) նվիրված աշխատանքները:

Սակայն մասնավոր պարապմունքների, վերապատրաստումների միջոցով մասնագիտական ենթալեզվի յուրացումը հնարավոր չէ իրականացնել հավուր պատշաճի, եթե բակալավրիատում և մագիստրատուրայում չեն վերանայվում գործող ծրագրերը: Անհրաժեշտ է ավելացնել օտար լեզուների ուսուցմանը հատկացվող ժամաքանակը, օտար լեզուների ուսուցումը դնել հաղորդակցական հիմքերի վրա, վերլուծել, վերանայել շրջանառվող դասագրքերը, ստեղծել նոր դասագրքեր, վերապատրաստել դասավանդող դասախոսներին, ավելացնել ուսանողների և դասախոսների գործուղումների թիվը, նշված դասընթացը կազմակերպել շարունակաբար թարմացվող ծրագրերով:

Բժշկական կողմնորոշման անգլերենն ուսուցանելու հարուստ ավանդույթներ են ձևավորվել ՀՀ-ում: Անգլերենի դասավանդման հիմնական միտումներից է բժշկական եզրույթների թեմատիկ բառացանկ կամ թեզաուրուս մշակելը, դրանք թարգմանելը: Բժշկական բնագրերի շուրջ աշխատանքը ենթադրում էր թարգմանել դրանք, վերարտադրել, կամ համառոտ ներկայացնել: Ուսանողների հաղորդակցական կարողությունների զարգացման հիմնախնդիրը հիմնականում մղվում էր հետին պլան:

Այսպիսով, կարելի է պնդել, որ բժշկական կողմնորոշման անգլերենն ուսումնասիրվում էր ընկալողական հմտությունների մակարդակում: Բավականին լավ էին մշակված բառային փոխներթափանցման հաղթահարմանը միտված վարժությունները, սակայն մշակութային, տրամախոսական փոխներթափանցման դրսևորումները բավարար չափով ուշադրության չէին արժանանում: Ընդհանուր առմամբ, բժշկական կողմնորոշման անգլերենն ուսումնասիրվում է տեքստի շուրջ աշխատանքի տրամաբանության շրջանակներում:

Նշված հիմնախնդրի տեսանկյունից առաջին պլան են մղվում բժշկական ենթալեզվի ձևավորման և զարգացման արտալեզվաբանական գործոնները: Այդ համատեքստում բժշկական խոսույթը հանդես է գալիս որպես տեսական կառույց, որը հնարավորություն է տալիս հաղթահարել բնագրի սահմանները, դիտարկել լեզվակիր թիշկների, հիվանդների, հիվանդներին սպասարկող մարդկանց, այցելուների կենդանի խոսքը տարբեր իրական լեզվական (authentic) իրադրություններում: Այդ համատեքստում բժշկական խոսույթի շուրջ աշխատանքն արդյունավետ միջոց է բժշկական կողմնորոշման բառապաշարի ներմուծման, յուրացման համար:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ բժշկական խոսույթը մեթոդիստների ուսումնասիրության առարկա է դառնում միայն նախորդ դարի վերջին քառորդում: Անգլերենի բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը, բժշկական խոսույթների փոխներթափանցման հաղթահարման տեսանկյունից, մնում է արդիական, որի լուծման կարևոր միջոց կարող է լինել անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարություններ կիրառելու մեթոդական համակարգի ստեղծումը և կիրառումը:

**Հետազոտության նպատակն** է մշակել անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարություններ կիրառելու մեթոդական համակարգ, որի ներդրումը կարող է զարգացնել ապագա թիշկների օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիան:

**Հետազոտության օբյեկտն** անգլերենի ուսուցումն է մասնագիտական կողմնորոշման դասընթացում:

**Հետազոտության առարկան** է անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները և դրանց կիրառման մեթոդական համակարգը:

**Հետազոտության վարկածը:**

Բժշկական կողմնորոշման անգլերենի մասնագիտական դասընթացում ուսուցման գործընթացը շարունակաբար կբարելավվի, եթե ճանաչողական-հասկացողային մոտեցման տեսանկյունից կընտրվեն անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները, կհստակեցվեն դրանց կիրառելու փուլերը, նպատակը, կտարանջատվեն բժշկական ենթալեզվի ուսուցման մասնագիտական, գիտական, կենցաղային և կրթական մակարդակները, կմշակվի վարժությունների համակարգ՝ ըստ կոնկրետ ռազմավարությունների:

**Հետազոտության խնդիրները՝**

1. ուսումնասիրել անգլերենի բժշկական ենթալեզվի ընտրությանը, վերլուծությանը և ուսուցմանը վերաբերող գիտամանկավարժական, մեթոդական գրականություն,
2. ներկայացնել անգլերենի բժշկական ենթալեզվի բովանդակային, գործառական, ռճաժանրային առանձնահատկությունները,
3. հստակեցնել անգլերեն բժշկական տեքստերի թարգմանության, բառապաշարի յուրացման, տարբեր մակարդակներում շփման և ուսուցման ռազմավարությունները,
4. մշակել անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման ռազմավարությունների կիրառման օպտիմալ կադապար և հիմնավորել նրա արդյունավետությունը:

**Հետազոտության մեթոդական հիմքն** են կազմում հետևյալ տեսությունները.

- հաղորդակցական-ճանաչողական (Skehan 1998, Spiro, Feltovitch, Jacobson, & Coulson 1992, Nunan 1989 և այլք),
- հանրամշակութային (Соловова, Формановская և այլք),
- կոմպետենտային (Աստվածատրյան 2005, Կարապետյան 2009 և այլք),
- խոսութային (Арутюнова 1990, Елухина 2002, Ковалёва 2014 և այլք),
- հասկացողային (Болокова 2009, Воркачев 2005, Карасик 2001 և այլք),

- փոխաբերության (Озингин 2010, Coulehan 2009 և այլք),
- պորբլեմային առաջադրանքների մշակման (Ellis 2003, Nunan 2004, Willis 2007, Мотченко 2001 և այլք):

#### **Հետազոտության մեթոդները՝**

- անգլերենի բժշկական ենթալեզվի հիմնական բաղադրիչների վերլուծություն,
- անգլերենի բժշկական տեքստերի և խոսույթների հաղորդակցական-ճանաչողական հայեցակերպի լուսաբանում,
- անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման դասագրքերի, մշակումների վերլուծություն,
- դասընթացի նախագծման և կազմակերպման գործոնների ուսումնասիրություն՝ անկետավորում, գրույց, թեստավորում,
- փորձարարական ուսուցման ընթացքի և վերջնարդյունքների վերլուծություն:

#### **Հետազոտության գիտական նորույթը.**

- բացահայտվել են անգլերենի բժշկական ենթալեզվի առանձնահատկությունները նրա բառապաշարի յուրացման մակարդակում,
- հիմնավորվել է բժշկական հասկացույթների /բժիշկ, հիվանդ, դեղամիջոց, բուժում և այլն/ զուգորդական-իմաստային դաշտերի ուսումնասիրությամբ համապատասխան բառային միավորների յուրացման արդյունավետությունը,
- բացահայտվել են բժշկական խոսույթների բովանդակային բնութագրերը բժշկական ոլորտում տարբեր հաղորդակցական ռազմավարությունների կիրառման և ուսուցողական նպատակներով դրանց յուրացման տեսանկյուններից,
- մշակվել է անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով ժամանակակից անձնակենտրոն, փոխներգործուն, համակարգչային-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը նշված դասընթացում:

#### **Հետազոտության տեսական նշանակությունը.**

խոսույթային, հասկացութային, ճանաչողական-հաղորդակցական մոտեցումների տեսանկյուններից վերլուծվել է անգլերենի բժշկական ենթալեզուն՝ շեշտը դնելով նրա բառային և հնչյունական բաղադրիչների յուրացման վրա: Ուսուցողական նպատակներով ուսումնասիրվել են

լեզվաբանական բժշկական խոսույթների և հասկացույթների վերլուծությանը նվիրված աշխատանքները: Ըստ այդ վերլուծության արդյունքների և անձնակենտրոն, փոխներգործուն, համակարգչային-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների բացահայտման՝ ներկայացվել են բժշկական բառապաշարի, նրա բաղադրիչների համակցված ուսուցման մեթոդական համակարգ, որը բնույթով միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովման յուրահատուկ համալիր է: Հիմնավորվել են լեզվական-մասնագիտական թղթապանակի փուլային ներդրման ընթացակարգերը:

#### **Հետազոտության գործնական նշանակությունը.**

Մշակված վարժությունների համակարգը, առաջադրանքների ընտրության սկզբունքները կարելի է կիրառել մասնագիտական կողմնորոշման (ESP) և մասնագիտական անգլերենի դասընթացներում, համապատասխան դասընթացների նախագծման և կազմակերպման, դրանց վերջնարդյունքների ստուգման և գնահատման ընթացքում: Հետազոտության վերջնարդյունքները կարող են հաշվի առնել մասնագիտական կողմնորոշման համար նախատեսված ուսումնամեթոդական համալիրների, ձեռնարկների, մշակումների ստեղծման գործընթացում:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն** ապացուցվում է հետազոտության ընթացքում կիրառված մեթոդաբանական սկզբունքների, ուսումնասիրության մեթոդների կիրառման արդյունավետությամբ, նորագույն հետազոտական, ուսուցողական, ուսումնառության մեթոդների այժմեականությամբ, առաջադրանքի և պրոբլեմի վրա հիմնված առաջադրանքների կիրառմամբ, համակցված ուսուցման (blended learning) տեխնոլոգիաների կիրառմամբ, փորձարարական ուսուցման մանկավարժական պայմանների շարունակական բարելավմամբ, բակալավրիատի և կլինիկական օրդինատուրայի անգլերենի ուսուցման դասընթացների բովանդակային կապի ապահովմամբ:

**Հետազոտության փորձաքննությունը.** Հետազոտության արդյունքները քննարկվել են ԵՊՀ անգլիական բանասիրության և մանկավարժության ամբիոններում:

**Հետազոտության փորձարարական հիմքը.** Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի «Հայբուսակ», Երևանի պետական տնտեսագիտական համալսարաններում:

Հետազոտությունն իրականացվել է երեք տարվա ընթացքում հետևյալ փուլերով.

**Առաջին փուլում** (2015-2016 թթ.) հավաքագրվել է հետազոտության թեմային վերաբերող գիտամեթոդական գրականություն, հստակեցվել են հետազոտության փուլերը, բազան, ատենախոսության բովանդակությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները:

**Երկրորդ փուլում** (2016-2017 թթ.) շարադրվել է առաջին գլուխը և դրան վերաբերող հոդվածները: Վերլուծվել են թեմային վերաբերող լեզվաբանական ուսումնասիրությունները: Հանգամանորեն քննարկվել են բժշկական ենթալեզվի ուսուցման անգլերեն դասագրքերը, դրանց ստեղծման մեթոդաբանությունը և չափորոշիչները, կիրառման հնարավորությունները ՀՀ համապատասխան բուհերում:

**Երրորդ փուլում** (2018-2019 թթ.) իրականացվել է փորձարարական ուսուցում, ընտրվել է գիտափորձին մասնակից համակազմը, դասագրքերը և վարժությունները, հիմնավորվել են տվյալ դասընթացները բարելավելու միջոցները, ձևակերպվել են սովորողների հաղորդակցական հմտությունների զարգացմանն ուղղված տեխնոլոգիաների մշակմանն ուղիները: Հետազոտության ավարտական փուլում ամփոփվել են նրա վերջնարդյունքները:

#### **Հետազոտության ներդրումը:**

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի «Հայբուսակ», Երևանի պետական տնտեսագիտական համալսարաններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց հոդվածում:

#### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները .**

1. Ուսանողը բժշկական որևէ հասկացույթի իմաստային-զուգորդական դաշտն ուսումնասիրելու ընթացքում յուրացնում է բժշկական բառապաշարը խոսակցական, գիտական, մասնագիտական և այլ բառաշերտերի մակարդակում, որը հնարավոր չէ միայն բժշկական եզրույթների ուսումնասիրության արդյունքում:

2. Բժշկության ոլորտում մասնագիտական մակարդակում հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման կարևոր պայման է առանձնացնել գնահատման, միտումնավոր նվազեցման, հուզականության, հաղորդակցական լավատեսության, հաղորդակցման ընթացքում աջակցման և այլ ռազմավարությունների յուրացումը:



3. Անգլերենի բժշկական փոխաբերությունների ներմուծման, ամրապնդման, յուրացման ընթացակարգերն անհրաժեշտ է դիտարկել ընդհանուր բառապաշարի ուսուցման համատեքստում՝ հաշվի առնելով նրանց հասկացությավորման, կարգայնացման և բաղարկման գործառույթները, նախադեպային տեքստերում հանդիպելու բարձր հաճախականությունը:

4. Բժշկական ոլորտում անգլերենի հաղորդակցման ռազմավարությունների յուրացումն անգլերենի բժշկական ենթալեզվի յուրացման կարևոր պայման է, որը պահանջում է բժշկական բնագրի հետ հետևողական աշխատանք: Այդ աշխատանքում առաջնային է ուսանողի հնչարտաբերական և բառային կոմպետենցիաների ձևավորումը և զարգացումը:

5. Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման տեխնոլոգիաներից առաջին պլան է մղվում անձնակենտրոն-փոխներգործուն տեխնոլոգիաները, մասնավորապես՝ ուսանողի մասնագիտական-լեզվական թղթապանակը:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 137 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, հետազոտության վարկածը, մեթոդաբանական հիմքերը, խնդիրները, հստակեցվել են գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնարկությունները, պարզաբանվել է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին **«Բժշկական բառապաշարի ուսուցման առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Անգլերենի բժշկական բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը»** ենթագլխում սահմանվում են անգլերեն բժշկական բառապաշարի հիմնական միավորները, դիտարկվում դրանք բառի և հասկացույթի մակարդակներում: Քննության են առնվում անգլերեն

բժշկական հասկացույթները՝ հաշվի առնելով անգլիական բժշկությանը վերաբերող ասացվածքների, ասույթների, թևավոր խոսքերի, տարբեր հատկաբանությունների ուսուցողական ներուժը:

Երկրորդ **«Անգլերենի բժշկական բառապաշարի ուսուցման խոսույթային հայեցակերպը»** ենթագլխում հանգամանորեն սահմանվում է «բժշկական խոսույթ» հասկացությունը, ներկայացվում է բժշկական բառապաշարը տարբեր դիսկուրսիվ իրադրություններում: Նշվում է, որ հնարավոր չէ հասկանալ, թարգմանել, ճիշտ գործածել բժշկական բառապաշարի ոչ մի միավոր, առանց հաշվի առնելու երկխոսողների տարիքը, դիրքը, կենսադիրքորոշումները, նրանց հաղորդակցական և մասնագիտական վարքագիծը:

Երրորդ **«Անգլերենի բժշկական մեղմասությունների ուսուցման ռազմավարությունները»** ենթագլխում սահմանվում է անգլերենի բժշկական մեղմասություն հասկացությունը, լուսաբանվում են անգլերենի բժշկական մեղմասությունները տարբեր տիպական օրինակներով, բացահայտվում է դրանց ուսուցողական ներուժը, հիմնավորվում՝ ուսուցման ռազմավարությունները: Փորձ է արվում մերձեցնել բժշկական մեղմասությունը բառապաշարի ուսուցման աջակցման կամ ֆասիլիտացիայի մեթոդիկային: Հիմնավորվում է այն գաղափարը, որ անգլերենի բժշկական մեղմասությունները տարբեր ուսումնական իրադրություններում պատրաստի ուսուցողական միավորներ են, որոնք մեծ հետաքրքրություն են առաջ բերում ուսանողների շրջանում, շահադրդում, մոտիվացնում են նրանց:

Ատենախոսության երկրորդ **«Անգլերենի լեզվաոճական հնարների կիրառումը անգլերենի բժշկական ենթալեզվում»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին **«Անգլերենի բժշկական ծածկալեզվի ուսուցման առանձնահատկությունները հայալեզու լսարանում»** ենթագլխում վերլուծվում և ընդհանուր գծերով ներկայացվում են անգլերեն բժշկական խոսույթի գործառական բնութագրերը, քննության են առնվում բժշկական խոսույթը բացահայտող լեզվաոճական հնարները: Խնդիր է դրվում յուրացնել անգլերեն լեզվաոճական հնարները ինդուկտիվ, ներակա, քանի որ ապագա բժիշկները լեզվաբաններ չեն: Միաժամանակ, փորձ է արվում բացահայտել բժշկական խոսույթին բնորոշ լեզվաոճական հնարների ուսուցողական ներուժը: Ներկայացվում են բժշկական ծածկալեզվի գործառական, բովանդակային բնութագրերը: Համապատասխան տիպական օրինակներով

փորձ է արվում բացահայտել ծածկալեզվյան արտահայտությունների ուսուցման ճանաչողական-հաղորդակցական ներուժը:

Երկրորդ գլխի երկրորդ **«Անգլերենի բժշկական փոխաբերությունների ուսուցման հիմնախնդիրը»** ենթագլխում սահմանվում է «բժշկական փոխաբերություն» հասկացությունը, լուսաբանվում է այն բազմաբնույթ տիպական օրինակներով: Բացահայտվում է նրանց ուսուցողական ներուժը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգլերենի բժշկական փոխաբերությունները հաղորդակցման կարևոր միջոց են թե՛ առօրյա-խոսակցական, թե՛ մասնագիտական մակարդակներում: Համապատասխան մեթոդաբանությամբ առաջարկվում է նախօրոք պատրաստած բժշկական փոխաբերությունների ցանկ, յուրահատուկ թեզաուրոս, որոնց ներմուծման և յուրացման համար առաջարկվում են համապատասխան բժշկական տեքստեր:

Առենախոսության երրորդ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման ռազմավարությունների կիրառման օպտիմալ կադապարը»** ենթագլխում ներկայացվում են անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման ռազմավարությունները, մեթոդները, հնարները, առաջադրանքները և վարժությունները, որոնք կազմում են առաջարկվող մեթոդական համակարգի հիմքը, ինչպես նաև անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման մոդելի բաղադրիչները, կառուցվածքը, բովանդակությունը՝ հաշվի առնելով անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման լեզվաբանական, հոգելեզվաբանական և լեզվադիդակտիկական մոտեցումները, հայեցակարգերը:

Երրորդ գլխի երկրորդ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման վարժությունների համակարգը»** ենթագլխում ներկայացվում են առաջադրանքի վրա հիմնված պահանջմունքների վերլուծության նպատակն ու խնդիրները: Հանգամանորեն վերլուծվում են առաջադրանքների (task-based), պրոբլեմների (problem-based), դեյքերի (case-based), իրադրությունների (situation-based) վրա հիմնված առաջադրանքները, հիմնավորվում է պրոբլեմների վրա հիմնված առաջադրանքների արդյունավետությունը:

Երրորդ գլխի երրորդ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման և կիրառման մեթոդական համակարգը»** ենթագլխում առաջարկվում են տարբեր անգլերեն բժշկական ենթալեզվի ուսուցման ուսումնական նախագծեր, որոնք հնարավոր է կիրառել բակալավրիատի, մագիստրատուրայի, կլին.օրդինատուրայի մակարդակներում: Առաջարկվող

մեթոդական համակարգի բարելավման նպատակով վերլուծվել են արտերկրում և ՀՀ-ում լույս տեսած բժշկական անգլերենի դասագրքերը, բացահայտվել են դրանց թերի կողմերը բժշկական բառապաշարի ուսուցման հասկացութային մոտեցման տեսանկյունից: Հաջորդ փուլում իրականացվել է փորձարարական ուսուցում բակալավրիատի առաջին կուրսում՝ ուսանողների քանակը փորձարարական խումբ - 35, ստուգողական խումբ - 34:

**Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ աղյուսակ 3**

Կարողություններ	Փորձարարական խումբ – 35		Ստուգողական խումբ – 34	
	Գիտա-փորձի սկզբում	Գիտա-փորձի վերջում	Գիտա-փորձի սկզբում	Գիտա-փորձի վերջում
1.հասկանալ անգլերեն բժշկական տեքստը բառարանի միջոցով և առանց բառարանի	14	17	13	15
2.առանձնացնել բժշկական եզրույթները, որոնք նպաստում են տվյալ տեքստը հասկանալուն	14	18	14	15
3.ընդգծել հոմանիշներն ու հականիշները	13	17	14	15
4.ընդգծել մեղմասությունները և թարգմանել	14	17	12	14
5.առանձնացնել բժշկական դարձվածքային միավորները	13	16	11	14

6.մեկնաբանել բժշկական իրողյունները և անհամարժեք բառապաշարի տարբեր բաղադրիչներ	11	15	11	13
7.կատարել նոր բառի ձևի, նշանակությանը և կիրառությանը վերաբերող առաջադրանքներ	12	16	12	14
8.տարբերակել, ճանաչել բժիշկների մասնագիտական և հիվանդների /հիվանդների մերձավորների ոչ մասնագիտական/ բառապաշարը	12	16	13	15
9.կիրառել բանավոր խոսքում բժշկական ուղղվածության բառապաշար	11	15	11	12
10.ստեղծել լեզվական-մասնագիտական թղթապանակ	12	17	12	14

Նշվում է, որ փորձարարական խմբի արդյունքները գերազանցում են ստուգողական խմբի արդյունքներն ուսուցման ավարտական փուլում: Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ առաջարկվող մեթոդների տևական կիրառումը կհանգեցնի ուսանողների լեզվագագացողության, լեզվամտածողության շարունակական զարգացմանը:

Փորձարարական ուսուցման հաջորդ փուլում խնդիր է դրվել պարզել, թե ինչ մակարդակում են ուսանողները կիրառում հաղորդակցական

նազմավարությունները: Փորձարարական ուսուցման արդյունքներն արտացոլված են աղյուսակ 4.

**Մագիստրատուրայի փորձարարական և ստուգողական խմբերի լեզվական մակարդակի զարգացման շարժընթացի ամփոփիչ աղյուսակ 4**

Կարողություններ	Փորձարարական խումբ – 10		Ստուգողական խումբ – 12	
	Գիտա-փորձի սկզբում	Գիտա-փորձի վերջում	Գիտա-փորձի սկզբում	Գիտա-փորձի վերջում
1.տարբերակել տարբեր տեքստեր՝ բժշկական, ոչ բժշկական, համագիտական, նեղ մասնագիտական, տեխնիկական, գեղարվեստական, ոչ գեղարվեստական	15	18	15	16
2.տարբերակել բժշկական տեքստերը՝ ըստ նրանց ժանրային առանձնահատկությունների	13	16	12	14
3.վերլուծել տեքստը՝ ըստ նրա բառապաշարային, քերականական, ոճական առանձնահատկությունների	12	15	12	14

4.անգլերեն նկարագրել հիվանդությունը, ախտորոշել, գրել դեղատոմս	11	15	10	13
5.ներկայացնել անգլերեն որևէ հիվանդություն, վիրահատության ընթացք, հետվիրահատական միջոցառումներ	12	16	12	14
6.կիրառել լեզվակիր բժշկի քաղաքավարի արտահայտվելու կանոնները	11	14	10	12
7.կիրառել տարբեր իրադրություններում բժիշկ-հիվանդ հաղորդակցման ռազմավարություններ	11	15	12	14
8.օգտվել անգլերեն անիմացիայից և այն ներկայացնել հայերեն և անգլերեն	13	16	13	15
9.ընտրել որևէ բժշկական բնույթի դասախոսության, հիվանդության բուժման նկարագրության տեսահոլովակ և նախապատրաստել դասընկերներին այն դիտելու համար	11	15	11	13

10.կազմակերպել քննարկում, բանավեճ ըստ ներկայացվող անիմացիայի կամ տեսահոլովակի:	12	16	12	14
--	----	----	----	----

Փորձարարական խմբում ներգրավված ուսանողների ցուցանիշները միջինը երկու տոկոսով գերազանցում են ստուգողական խմբի ուսանողների ցուցանիշներին: Դա նախ և առաջ բացատրվում է այն փաստով, որ նրանք փորձարարական ուսուցման ընթացքում մեծ քանակությամբ բժշկությանը վերաբերող անիմացիաներ, տեսահոլովակներ, գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր են դիտել և քննարկել անգլերեն:

Կարևոր եզրահանգում է այն, որ հնարավոր չէ զարգացնել ուսանողի հաղորդակցական կոմպետենցիան առանց որոշելու տվյալ դասընթացում խոսողության, գրելու, ընթերցելու, ունկնդրման և թարգմանության հարաբերակցությունը: Կարևոր է հնարավորինս ապահովել միջառարկայական կապերը, կիրառել ուսուցման փոխհատուցման ռազմավարություն և ուսանողի մոտ ձևավորել ինքնուրույն աշխատանքի մշակույթ:

### **Եզրակացություններ**

1. Անգլերենի բժշկական ենթալեզուն բովանդակային առումով բազմաշերտ է, որտեղ առաջին պլան են մղվում գիտական-մասնագիտական և բժշկական-խոսակցական բառաշերտերը: Հաղորդակցական-ճանաչողական մոտեցման կիրառման տեսանկյունից ուսուցման միավոր է դառնում ոչ թե բառը կամ եզրույթը, այլ բժշկական հասկացույթը:
2. Բժշկական բառապաշարի ուսուցման խոսութային մոտեցումը ընկած է հասկացութային մոտեցման հիմքում, քանի որ ցանկացած բժշկական հասկացույթ /բժիշկ, հիվանդ, դեղորայք/ կոնկրետ բժշկական խոսությի



շրջանակներում է ձևավորվում: Այդ համատեքստում խոսքը մեղմելու, դրական տոնայնությամբ, գնահատման, միտումնավոր նվազեցման, հուզականության, հաղորդակցական լավատեսության, հաղորդակցվելիս աջակցման ռազմավարությունների ուսուցումը նպաստում է ապագա բժիշկների մասնագիտական-խոսությանին կոմպետենցիայի ձևավորմանը, որն ընկած է հաղորդակցական կոմպետենցիայի հիմքում:

3. Բժշկական մեղմասությունների կիրառման ռազմավարությունների յուրացումն օգնում է ուսանողներին ոչ միայն ընկալել, հասկանալ և անգամ գործածել ներմուծվող բժշկական բառը, եզրույթը՝ ըստ դրա մեղմասության աստիճանի, այլև յուրացնել ներմուծվող բժշկական եզրույթի իմաստային-զուգորդական դաշտը, հաշվի առնելով ուսումնասիրվող բժշկական խոսույթի առանձնահատկությունները:

4. Բժշկական բնագրային տեքստերի հետ աշխատանքը հնարավորություն է ընձեռում ուսանողին յուրացնել թե՛ լեզվակիր բժշկի, թե՛ լեզվակիր հիվանդի բառապաշարը, ինչպես նաև տարբեր բժշկական եզրույթների արտաբերական առանձնահատկությունները:

5. Անգլերենի բժշկական խոսույթն ուսումնասիրելով՝ ուսանողները յուրացնում են լեզվակիրներին բնորոշ հաղորդակցման ռազմավարություններ՝ սփոփելու, հիվանդությունը միանգամից չհայտնելու, հիվանդությունը ճիշտ ախտորոշելով հիվանդին բուժելու, բուժում ստանալու ընթացքին նախապատրաստելու, մեղմասություններ կիրառելով՝ խոսքը ավելի բարեհաճ դարձնելու, համոզելու, հորդորելու, երբեմն առաջարկվող բուժման մեթոդները գովազդելու և այլն:

6. Առաջարկվող կաղապարի հիմքում ընկած են բառապաշարի ուսուցման, ուսումնառության, ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի զարգացման ռազմավարությունները, որոնք ձևավորվել են ճանաչողական-հաղորդակցական մոտեցման շրջանակներում:

7. Մեր կողմից մշակված ռազմավարությունների ներդրման արդյունքում ստացված տվյալների վերլուծությունը հիմնավորում է բառապաշարի ուսուցման, ուսումնառության, ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի զարգացման ռազմավարությունների կիրառման արդյունավետությունը, որը ձևավորվել է ճանաչողական-հաղորդակցական մոտեցման շրջանակներում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են  
հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական  
հրապարակումներում.**

1. Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման տրամախոսական հայեցակերպը // Ակունք գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու, N 2(12), Երևան, 2015, էջ 64-70:
2. Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական մեղմասությունների ուսուցման ռազմավարությունները // Մանկավարժական միտք, N 1-2 (60-61), «Զանգակ», Երևան, 2016, էջ 104-109:
3. Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական եզրույթների ուսուցման հիմնախնդիրը // Մխիթար Գոշ, N 1 (46), Երևան, 2017, էջ 159-163:
4. Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական խոսույթի ուսուցման հիմնահարցերն արդի փուլում // Մխիթար Գոշ, N 2 (47), Երևան, 2017, էջ 217-221:
5. Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական ծածկալեզվի ուսուցման առանձնահատկությունները հայալեզու լսարանում // Մանկավարժական Միտք, N 1-2 (64-65), Երևան, 2017, էջ 209-212:
6. Կարապետյան Ի. Կ., Մեծլույան Ք. Հ., Անգլերեն բժշկական փոխաբերությունների ուսուցման հիմնախնդիրը // Մանկավարժական միտք, N 3-4 (66-67), Երևան, 2017, էջ 43-48:

**МЕЖЛУМЯН КРИСТИНЕ ГАМЛЕТОВНА**

**КОММУНИКАТИВНЫЕ СТРАТЕГИИ ОБУЧЕНИЯ МЕДИЦИНСКОМУ  
АНГЛИЙСКОМУ ПОДЪЯЗЫКУ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по  
специальности 13.00.02 - «Методика преподавания и обучения»  
(английский язык) .

Защита диссертации состоится 28 сентября, 2023 года, в 12.00, на заседании  
специализированного совета 020 «Педагогика» ВАК РА по присуждению ученых  
степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.  
Абовяна. Адрес: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность темы** обусловлена необходимостью создания методической системы обучения английскому медицинскому подъязыку. В целом английский медицинский подъязык изучается в рамках логики работы над текстом. Медицинский дискурс стал предметом изучения методистов в последней четверти прошлого века. Упражнения, направленные на преодоление лексической интерференции, были достаточно хорошо разработаны в рамках разных методических систем. Однако не в должной мере разработаны вопросы, посвященные преодолению культурной, дискурсивной интерференции. Не случайно проблема преодоления медицинских дискурсов остается актуальной.

**Целью исследования** является разработка методической системы применения коммуникативных стратегий обучения английскому медицинскому подъязыку, реализация которых позволяет развивать иноязычную коммуникативную компетенцию будущих врачей.

**Объектом исследования** является преподавание английского языка в профессионально- ориентированном курсе английского языка.

**Предметом исследования** являются коммуникативные стратегии обучения английскому медицинскому подъязыку и методическая система их применения.

В соответствии с целью, объектом и предметом исследования были предложены следующие задачи.

1. изучить научно-педагогическую и методическую литературу, связанную с отбором, анализом и преподаванием английского медицинского подъязыка;

2. представить содержательные, функциональные и стилистические особенности английского медицинского подъязыка;
3. уточнить стратегии перевода медицинских текстов на английский язык, усвоения словарного запаса, стратегии общения и обучения на разных уровнях;
4. разработать оптимальную модель применения стратегий обучения английскому медицинскому подъязыку и обосновать его эффективность.

#### **Научная новизна исследования.**

- . выявлены особенности английского медицинского подъязыка на уровне пополнения словарного запаса,
- . обоснована эффективность усвоения соответствующих словесных единиц путем изучения синтаксико-семантических полей медицинских концептов (врач, больной, лекарство, лечение и др.);
- . выявлены содержательные характеристики медицинской речи с точки зрения использования различных коммуникативных стратегий в медицинской сфере и их освоения в образовательных целях;
- . разработана методическая система обучения английскому медицинскому подъязыку с учетом необходимости и целесообразности использования в данном курсе современных лично-ориентированных, интерактивных, компьютерно-телекоммуникационных технологий.

**Теоретическая значимость исследования.** Медицинский подъязык проанализирован с точки зрения дискурсивного, понятийного, когнитивно-коммуникативного подходов, делая акцент на усвоение его лексических и фонетических компонентов. В учебных целях изучались работы, посвященные анализу медицинских дискурсов и концептов. По результатам такого анализа и выявления возможностей использования лично-ориентированных, интерактивных, компьютерно-телекоммуникационных технологий, разработана методическая система комбинированного обучения медицинской лексике и ее компонентам, представляющая собой уникальный комплекс обеспечения межпредметных и внутрипредметных связей.

**Практическая значимость исследования.** Разработанная система упражнений, принципы отбора заданий могут быть применены в профессионально-ориентированных курсах английского языка (ESP) при разработке и проектировании и организации соответствующих курсов, а также в процессе проверки и оценивания их результатов. Основные результаты исследования могут быть учтены в процессе создания учебно-методических комплексов, пособий и разработок.

**Структура и объем работы.** Диссертация объемом в 137 страниц состоит из введения, трех глав, заключения, списка литературы, таблиц, графических изображений, диаграмм, оригинальных текстов и приложений.

**KRISTINE H. MEZHLUMYAN**

**COMMUNICATIVE STRATEGIES FOR TEACHING MEDICAL  
ENGLISH SUBLANGUAGE**

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, speciality

13.00.02 “Teaching and Education Methodology” (English).

The defence of the thesis will be held on September 28, 2023, at 12.00 p.m. at the session of the Special Board 020 “Pedagogy” SCC of RA (Supreme Certifying Committee) on awarding degrees at Armenian State Pedagogical University after Khachatur Abovian. Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

**SUMMARY**

**The relevance of the topic** is due to the need to create a methodological system for teaching English medical sublanguage. In general, the English medical sublanguage is studied within the framework of the logic of working on the text. Medical discourse became the subject of study by methodologists in the last quarter of the last century. Exercises aimed at overcoming lexical interference were quite well developed within different methodological systems. However, questions devoted to overcoming cultural, discursive interference are not properly developed. It is no coincidence that the problem of overcoming medical discourses remains relevant.

**The aim of the research** is to develop a methodological system for the application of communicative strategies for teaching English medical sublanguage, the implementation of which allows developing foreign language communicative competence of future doctors.

**The object of the research** is to teach English in a professionally-oriented English course.

The subject of the research is to select English teaching communicative strategies of medical sublanguage and the methodological system of their application.

In accordance with the purpose, object and subject of the study, the following tasks were proposed.

1. study the scientific and methodological literature related to the selection, analysis and teaching of English medical sublanguage,
2. present the content, functional and stylistic features of English medical sublanguage,

3. clarify strategies for translating medical texts into English, vocabulary acquisition, communication and learning strategies at different levels,

4. develop an optimal model for the application of medical English teaching strategies and substantiate its effectiveness,

**The scientific novelty of research.**

- it reveals the features of the English medical sublanguage at the level of vocabulary acquisition,
- it substantiates the effectiveness of assimilation of the corresponding verbal units through studying the syntactic-semantic fields of medical concepts (doctor, patient, medicine, treatment, etc.),
- it identifies the content characteristics of medical speech in terms of the use of various communication strategies in the medical field and their development for educational purposes,
- it develops a methodological system for teaching English medical sublanguage, taking into account the need and expediency of using modern personality-oriented, interactive, computer and telecommunication technologies in this course.

**The theoretical significance of the research.**

It analyses English medical sublanguage from the point of view of the discursive, conceptual, cognitive-communicative approaches, with an emphasis on the assimilation of its lexical and phonetic components. For educational purposes, the works devoted to the analysis of medical discourses and concepts. Based on the results of such an analysis and identification of the possibilities of using student-oriented, interactive, computer and telecommunication technologies, a methodological system of combined teaching of medical vocabulary and its components has been developed, which is a unique complex for providing interdisciplinary and intradisciplinary communications.

**The practical significance of the research.**

The developed system of exercises, the principles of task selection can be applied in professionally - oriented English language courses (ESP), in the development and design and organization of relevant courses, as well as in the process of checking and evaluating their results. The main results of the research can be taken into account in the process of creating educational and methodological complexes, manuals and developments.

**The structure and scope of the work.**

The thesis of 137 pages consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, original texts and appendices. It also comprises tables, charts and diagrams.

